

Կոյս մ'արեգին հետ ըստոր
Դուրս կը սահի շնորհաւոր:

Վարսերն ալիք ծրփռփուն
Նայանուշի մը հանգոյն.
Աչքերն յակինթ կուտական
Ջըրի շուշան մայիսեան:

Նաւ մ'է փոքրիկ սաթի պէս
Աւազաստներն ալ բեհեզ,
Ծոցերն ուռած հողմավար,
Առաջ կ'երթայ Ս. Ղազար:

Կըզգեակն այն սուրբ երազ է,
Կըզգեակն այն վառ դըրախտ է
Հէքեաթներու մի դըղեակ,
Եւ ադամանդ հազարակ:

Լուրթ տիգերքն է հայլի,
Ուր անդրադարձ կը փայլի.
Ջահ մ'է կախուած կապոյտէն
Շիթ մ'Աստուծոյ բիրբրէն:

Ես երազի թևերով
Թրուած կու գամ հեւալով
Հողըդ պազնել անբարբառ
Լալ ու խընդալ, Ս. Ղազար:

Ու ծնրադիր կ'աղօթեմ
Քու սրբազան բազնիդ դէմ.
Սօսանքէ՛ր ատրուշան.
Ուր այրեցաւ Ալիշան:

Ճերմակ տաճար մեղմօրօր
Ոգիներու մենաւոր,
Որ լըռութեան քողին տակ
Կ'ապրին սիրոյ նահատակ:

Ծաղկաբուրդ խոր լըճակ
Կըզգին կարապ. ըսպիտակ.
Ոսկեփրփուր աւազան,
Նայանուշիդ լոգարան:

Վա՛շ երջանիկ կըզգեկին
Ուր մահ չի կայ տխրածին.
Նոճին փառքի արձան է:
Ամէն տապան խորան է:

Լինն հըրաբուն հանգըրուան
Բախտն է չըքնաղ է մահուան.

Լացող ուռին ոսկեվրան,
Քանի՛ հազար ուխտական:

Հանճարներու շուքին տակ
Ի՛նչ քաղցր է կեանքն ու վաստակ,
Ուր ձիթենին պայրընան
Հուսկ ինձ յետին ճգնարան:

Թող գան ու գան իմ սըրտիս
Մարմանդ հովեր լըճակիս.
Ըզգամ վըրաս տաքուկ շունչ՝
Ու գոհ հանգչիմ անշըլունչ:

Հեռու տանջող մարդերէն
Ոչ սըրտմաշուք է ոչ քէն.
Այս անհունին մէջ խոհուն
Ապրիլ յաւերժ երազուն:

Ո՛հ կ'երազեմ կըզգին սուրբ
Ուր կեանքն անոյշ, հոգին նուրբ,
Լըճակն ամբողջ քաղցր երազ
Ու լըռութիւն հանապազ:

Հ. Վ. ՅՈՎԱԿԻՄՅԱՆ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԵԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ՓՈՔՐԻԿ ՍՏԱԽՍՍԸ

(Շար. տես Բազմավէպ, 1926, էջ 78)

ՏԵՍԻԼ Ը.

ՓԻԼՊՊՈՍ և յետոյ ՖԵԼԻՔԷ

Փիլիպ. (ցոյց տալով դարանը). — Է՛հ, տեսնե՞ք
թէ այս անգամ պիտի յաջողիմ լինցնելու
զայն: (Կ'ելնէ արտաքին վրայ և կը սկսի վե-
րստին ուտել):

Ֆելիք (ննդահէ). — Կու գամ, շուտով կու գամ:
Փիլիպ. (արտաքին վառ ցատքով). — Կրճղը
տանին: Ֆելիքն է (արագութեամբ գրպանը
կը դնէ կարկանդակը): Կարողա՛ւ ձեռքները
(կը վազէ գրասեղանին առջև):

Ֆելիք (մտնելով). — Է՛հ, կը ճանչնամ ես իմ
ձագուկներս: Այս շինը աւելի ապահով է դա-
րանին մէջ: (Կը յսկանայ դարանը, կ'անդրադառ-
նայ գողութիւնը և գարմանքով, չափազանց

վախցած) Ողորմած Տէր, Բնէ բան կը տեսնեմ...

Փիլիպ. (ստորվիկ կեղծերով). — Այսպէս եղաւ...

Տրոյիայի պատերազմը:

Ֆելիք (ողորներգական). — Պարոն փիլիպպոս:

Փիլիպ. — Ի՞նչ կայ:

Ֆելիք. — Կարկանդակը:

Փիլիպ. — Կարկանդակը...

Ֆելիք. (ողորներգ). — Անբերեալ թացքն է:

Փիլիպ. (կարգէ դռնը գալովաներով). — Իրաւէ կ'ըսես:

Ֆելիք. — Դարանին մէջ չկայ այլ ևս:

Փիլիպ. (յիտնելով). — Ո՛հ, կարելի՛ բան է:

Ֆելիք. (նամարանով). — Դրան կը գնեմ, մէկը զայն կերած պիտի ըլլայ:

Փիլիպ. (յրջօրէն). — Թե՛րեւս:

Ֆելիք. — Եւ ես կը կասկածեմ որ...

Փիլիպ. — Ե՛ս ալ:

Ֆելիք. (չմեղմելով վերի խօսքը). — Դու եղած ըլլաւ:

Փիլիպ. (վտացած). — Ե՛ս... Բայց խօսքերուդ ոչ դիր, ապա թէ ո՛չ...

Ֆելիք. — Եւ եթէ զայն տեսած ըլլամ:

Փիլիպ. (զայրակոյցով). — Ձե՛կիդ. քու տարի-թիւ մէջ ներելի չէ բնաւ ստելը:

Ֆելիք. — Բայց այն ժամանակ, ո՞վ առած է զայն:

Փիլիպ. (մտերմական). — Կ'ուզե՛ս գիտնալ զայն:

Ֆելիք. — Ըսէ՛ տեսնեմ:

Փիլիպ. — Բայց... մէկու մը չըսես, ա՛ն:

Ֆելիք. — Կ'ենթադրուի:

Փիլիպ. (ցած ձայնով). — Արմանդոն:

Ֆելիք. — Գաւ լիցի, չեմ հաւատար:

Փիլիպ. — Զարմանալի բան. աչքովս տեսայ զայն:

Ֆելիք. — Բայց իրացնէ, ստոյգ կ'ըսես:

Փիլիպ. — Մանաւանդ թէ, անկէ կտոր մ'ալ կ'ուզե՛ր ինծի տալ, բայց ես... բնաւ:

Ֆելիք. — Մերժեցի՛ր զայն:

Փիլիպ. — Ես այնքո՛ւ է:

Ֆելիք. (մէկ ձեռքովը անոր ուսին զարնելով). — Ապրիս:

Փիլիպ. — Հիմայ հնարք մը կ'ուզէ զայն դարձնելու համար:

Ֆելիք. — Արդէն գտած եմ: Իս մամէն բան տիրոջս պիտի իմացնեմ, և ձեռքերս լուալով մէջէն կ'ազատիմ:

Փիլիպ. (զայրացած). — Դու բնաւ պիտի չի՛ մացես զայն:

Ֆելիք. (վճռական). — Ոչ, պիտի իմացնեմ ան. պատճառ (դատար մը. զայրացկոտ) պահ մը իրարուն նշան կը նային:

Փիլիպ. — Այսօր հայրիկը յոռի տրամադրու... թեան մէջ է. կրնայ նոյն իսկ պատժել զինքը:

Ֆելիք. — Այն ասան ինչո՞ւ կերաւ կարկանդակը:

Փիլիպ. — Որովհետեւ անուշեղէնը ամենուն ալ անորոշելի է. ճանճերուն անգամ:

Ֆելիք. — Ոչ, ոչ, ո՛չ. կերաւ. թող պա՛տիժը կրէ (վշիշէն):

Փիլիպ. — Ի՞նչեք Արմանդոյ...

ՏԵՍԻՆԻ Թ.

ՓԻԼԻՊՊՈՍ միայն.

Փիլիպ. — Այս օրուան խօսածներս օտտի խոչոր պարկ մը կը լեցնեն: Հայելիին համար՝ յանձնաւոր Խողովոյի վրայ ձգեցի. կարկանդակին համար՝ Արմանդոյի վրայ... Պչիկ մը ամէն մէկին... ոչ որք զնա կ'ընէ: Ո՛հ, հոն նայէ, Պապիկին պայուսակը: Ո՞վ գիտէ որ՝ չափ խաղալիկներ (կ'ոգէ բանալ պայուսակը) կը պուտնէ: օրհնած կը պատմեն և զանազան հնարողները: Լուռ, ահա բանալին: Հետաքրքիր եմ տեսնելու թէ Բնէ կրող բերած է մեզի (կը խաղալիկէ): Պուպիկ մը, յայտնի է՝ ասիկայ Արմանդոյին համար պիտի ըլլայ: Հերկերու տուպ մը վրէժնով: Ասիկայ թափէ Խողովոյին նուէր մ'է: Ո՛հ, ապա ինծի՛ համար... Թո՛հ, Թո՛հ փորձիկ հրացան մը: Որչափ հարուածներ կ'ուզեմ պարպել: Խողովոյ և Արմանդոյ Գեորգիանցիները պիտի ըլլան, իսկ ես... իտայական բանակը: (Ներսէն յայնչուռ տոնաձայններ կը խռնի) Ե՛տեւ, շուտ, ամէն բան իր տեղը դնեմ: (առաքակաները խաղալիկները պայուսակին մէջ կը լեցնեն):

ՏԵՍԻՆԻ Թ.

ԻԿԱՆՏՈՍ և Վերինն.

Իգնատ. (Ներսէն). — Փոյթ չէ. ես կ'երթամ զինքը գտնելու:

Փիլիպ. (դէպ ի գրասեղանը վազելով) Հայրիկն է, փառելու ժամանակ է:

Իգնատ. — Դեռ հոն ես դու, Բնէ կ'ընես:

Փիլիպ. (անո՛ւ ձայնով). — Կը սովորեմ, հայրիկ:

Իգնատ. — Ի՞նչ բան:

Փիլիպ. (կարեւորութիւն տալով). — Յունաւան պատմութիւն:

Իգնատ. — Ի՛նչ է պատճառն որ երեսդ այդպէս կարմիր է:

Փիլիպ. — Գուրբա կախ կեցած էի:

Իգնատ. — Ուրեմն շատ կարողացիր:

Փիլիպ. (նախաշնորհ). — Բոլոր առաւօտը, հայրիկ:

Իգնատ. — Զ՛մ. ըսածդ՝ ինծի առաջակը մը կ'երեւի:

Փիլիպ. — Հարցուր որուն որ ուզես:

Իգնատ. (գետնէ նայելով). — Ո՛հ, հոն...

Փիլիպ. — Փշրանքներ են:

Իգնատ. — Կը տեսնեմ: Բայց ո՞վ է թափեր զատուք:

Փիլիպ. — Խողովոյի:

Իգնատ. — Խողովոյի:

Փիլիպ. — Այո, հաց ուտելով:

Իգնատ. — Եւ, հակառակաւ, կը կարծէի որ քու գործը ըլլայ անիկայ:

Փիլիպ. — Ի՞մս, և ո՞չ իսկ մտքէ անցնելու բան:

ՏԵՍԻԼ ԺԲ.

ԱՐԾԱՆՈՑ և ՎԵՐԻՆԵՐ.

ՏԵՍԻԼ ԺԱ.

ՅԱՐՈՒԹԻՒՆ, ԹՈՒՈՒԹՈՆ և ՎԵՐԻՆԵՐ.

Յար. (հանդիպելով անոր). — Ո՛հ սիրելիդ իմ իղնատիտ:

Իղնատ. — Բարի լոյս, հայրիկ. բնչպէս ես...

Յար. — Կ'ուզես զայն գիտնալ, ծերունիկ նման:

Իղնատ. — Երբ քաջողջութիւն կայ, մարդս միշտ երիտասարդ է:

Յար. — Երիտասարդ այո՛, բայց քիչ ժամա նակի համար: Անիկայ է չարիքը:

Իղնատ. (ցոյց տալով փշրանքները). — Բողոք փոյ, տեսա՛ր ինչ բրեք ես հոս:

Թողոյփ. — Ո՞վ, մ'ս:

Իղնատ. — Այո՛, այո՛, դուն: Հաց չկերա՛ր:

Թողոյփ. — Բայց ներքեցեք, ո՞վ բտաւ ձեզի այդ բանը:

Իղնատ. — Փիլիպպոս:

Թողոյփ. — Շնորհալի է արգարիս:

Իղնատ. — Եւ ուրեմն սո՛ւտ մ'է բտածը:

Թողոյփ. — Յայտնի՛ է:

Փիլիպ. (մահացած). — Ներէ՛ հայրիկ: Ա՛լ պիտի չընեմ զայն:

Յար. (որ այդ միջոցին պայտաւակին քով գացած կ'ըլլայ). — Բարե՛, ո՞վ բացեր է իմ պայտաւակս:

Փիլիպ. (ինքն իրեն). — Դող կու գայ վրաս:

Թողոյփ. — Գուցէ փակուած չէր անիկայ:

Յար. (ուժգին). — Ո՛չ ո՞չ. իմ այս ձեռքերովս զայն ամուր փակեցի:

Իղնատ. — Փիլիպպոս, տեղեկութիւն մ'ուռնիս դու անկէ:

Փիլիպ. — Ե՛ս... և ոչ իսկ տեսած եմ զայն:

Իղնատ. (խտորեմ). — Է՛հ, պարտնիկ...

Փիլիպ. — Կրնամ երգումն ընել բտածիս վրայ:

Իղնատ. — Լա՛, սուտը քթիկ վրայէն կը վազէ: Դու ամէն բան գիտես (խորամանկաւ քսամբ գոշակերտ համար):

Փիլիպ. (շատով). — Գիտեմ զայն. բայց ես չեմ:

Յար. — Ուրեմն ո՞վ է:

Փիլիպ. — Այն հետաքրքիր Ֆէլիշէն:

Իղնատ. — Արդեօք ստո՞յգ է, ծառայ մը որ...

Փիլիպ. — Զարմանք. աչքովս տեսայ զայն:

Յար. (զայրացած). — Անամո՞թը, ես անոր կը ցուցնեմ: Ա՛ռ Թողոյփոյ: Անիկայ ամենանորբ գոյներու տուի մ'է: Սո՞վրէ և հետամուտ եղիր արուեստագէտ մը դառնալու:

Թողոյփ. — Շնորհակալ եմ պապի ջան: Տես հայրիկ, ինչ սիրուն է:

Իղնատ. — Այո՛. բայց գոյն տալէ առաջ՝ գտե՛ղ գծագրութեան մէջ զարգացուր:

Յար. — «Ոչ մէկ օր առանց գծելու» կ'ըսէր այն պարզամիտ Ապոկոսը:

Արմանդ. (կր մտնէ վազելով, ցատկելու պատան մը ձեռքը բռնած). — Ինչ լաւ, ինչ աղէկ Պապին հոս է, իմ սիրելի պապի ջանս:

Յար. — Հոս, համբար մը, խենդուկս:

Արմանդ. (աւանգնելով). — Կողով մը, պարկ մը պապի:

Յար. — Ո՛ւր էիր մինչև հիմայ:

Արմանդ. — Պարտէզն էի, պարան կը խաղայի:

Յար. — Կեցցես, և ինչո՞ւ չեկար գիտ բարեւ լու համար:

Արմանդ. — Կը կարծէի որ ա՛լ պիտի չգայիր:

Յար. — Ո՞վ:

Արմանդ. — Հրամանք:

Յար. — Տխմար:

Արմանդ. — Բայց այո՛. միթէ՛ ձիէն վար ընկած չե՛ս:

Յար. — Ե՛ս. և ոչ իսկ աւանակէ:

Արմանդ. — Մէկ տեղը չցաւցուցիր:

Յար. — Ե՛ս. բայց չէ՞ որ այն սենեկէն դուրս եկայ ձուկի նման ուլ առողջ:

Արմանդ. (ինքն իրեն). — Ա՛հ, հիմայ կը հասկընամ առնետին պատմութիւնը:

Յար. — Բայց ո՞վ բտաւ քեզի այդպիսի այլանդակութիւններ:

Արմանդ. — Փիլիպպոս:

Փիլիպ. (ինքն իրեն). — Լեզուդ չորնար:

Իղնատ. (Փիլիպպոսին). — Ինչպէս, մինչև այս կէտին հասնի:

Փիլիպ. (շփոթած). — Ստոյգ է: Բայց ես...

ուզեցի կատակ ընել:

Իղնատ. (ականչէն քայելով). — Կատակել, է՛հ... բայց և ոչ իսկ կատակի համար սուտ կ'ըսուի:

Թողոյփ. (ցոյց կու տայ գոյներու տուփը). — Տես, Արմանդ:

Արմանդ. — Ո՛ւհ, ինչ գեղեցիկ ներկիր:

Թողոյփ. — Ատո՞ք ալ վրձիններն են:

Արմանդ. — Ո՞վ տուա քեզի զատոնը:

Թողոյփ. — Պապին:

Արմանդ. — Հապա ինծի՛ ոչ մէկ բան...

Յար. — Հանգարտէ՛, հանգարտէ՛: Քեզի համար ալ բան կայ:

Արմանդ. — Կեցցէ՛ իմ սիրելի Պապիս:

Թողոյփ. — Տես թէ՛ ինչ ինկաւ միւտք... Ըսէ՛, Պապի ջանս, ստո՞յգ է որ շատ յառաջադիմութիւն գտած ես Փիլիպպոսի վրայ:

Յար. — Ե՛ս:

Թողոյփ. — Այո՛, Հրամանք: Կ'ըսէ՛ թէ հազիւ տուն հասած՝ զիւրը հարցաքննեք ես:

Յար. — Ամենաստոյգ է: Բայց նա լեւ մը սխալ ներով պատասխանեց, մէկը՝ միւսէն աւելի խոշոր:

Թողոյփ. — Ուրեմն ճշմարիտ չէ՞ որ ապշած մնացեր ես...

Յար. — Ապշած այո՛... բայց իրեն աւանակուած եմ վրայ:

իգնատ. (Փիլիպպոսի). — Լսեցի՞ր գեղեցիկ գու-
վեստները:

Փիլիպ. (անդացած). — Այո՛, այսօր ամէնքն ալ
ինծի դէմ ելեր են:

Յար. — Դու «մեղայ» ըսէ և օրինակ ո՛ւր Ռու-
զուփոյէն:

Իգնատ. — Լուռ, անիկայ ալ իր յանցանքներն
ուներ:

Յար. — Բայց ստո՞յգ է:

Իգնատ. — Այս առաւօտ, օրինակի համար,
մօրը հայելին կտորեց:

Յար. (Ռոտրոփոյի). — Է՛հ, դու ալ տղաս:

Ռոտրոփ. — Ո՛վ ըստ այդ բանը, Փիլիպպոս
ինքն՝ այնպէս չէ՛:

Իգնատ. — Ճիշտ ինքը:

Ռոտրոփ. — Շատ լաւ ուրեմն: Ինքն է որ չա-
րութիւն կ'ընէ և յետոյ յանցանքը ուրիշի
վրայ կը նետէ:

Փիլիպ. — Բայց ծո՛ւ...

Ռոտրոփ. — Այո՛ պարոն. դու կտորեցիր հայե-
լին, սեղիկը քերթելու համար: Այնչափ ու-
զիկ է ըսածս որ հայելին կտորելու ժամանակ,
մինչև անգամ իր բուժ մատը կտրած է: Տե՛

սէք: (Կը ցուցնէ ամենուին Փիլիպպոսի կա-
պառած աւտոր):

Իգնատ. (զայրացած) Հասկցայ. հոս գերմանե-
րէն քերականութեան պէտք կայ (պապականի
սպառնալիք կ'ընէ):

Արմանդ. — Հայրիկ, կերականութի պիտի եր-
թանք, Պապին անօթի պիտի ըլլայ:

Յար. — Է՛հ, գէշ չես ըսեր, սիրելիս: Այս հա-
սակին մէջ, քիչ բայց ստեղծ ուտելու պէտք
կայ:

Արմանդ. — Տեսնե՛ս Պապի, հաւի խորոված
մ'ուշիկը որ ջայլած կը կարծրուի:

Ռոտրոփ. — Եւ կարկանդակ մը որ կ'ըսէ «կներ
գիտ»:

Փիլիպ. (ինքն իրեն). — Այդպէս կ'ըսէր, բայց
հիմայ...

Յար. — Եւ ո՛ր է այդ անուշը:

Իգնատ. — Դարանին մէջ (կը բանայ) քնչպէս,
աներևութացե՞ր է:

Փիլիպ. — Ես չեմ դպած անոր բնաւ:

Ռոտրոփ. — Եւ ոչ ալ ես:

Արմանդ. — Ո՛հ, միթէ՛ Կո եմ:

Փիլիպ. — Բայց... զուցէ կատուն առած ըլլայ
զայն:

Իգնատ. — Բայց չե՛ որ ամիսէ մ'ի վեր մեռած
է ան... Ա՛հ, անա թէ ով կրնայ տեղեկու-

թիւն մը տալ մեզի անոր վրայ: (Դէպի ի դռն
օր) Ֆելիքէ:

ՏԵՍԻԼ ԺԳ.

ՏԵԼԻՅԵ և ՎԵՐԻՆՔ.

Ֆելիքէ. — Հրամայեցէք:

Իգնատ. — Ի՛նչ պատահեցաւ այն կարկան-
դակին:

Ֆելիքէ. (պահ մը մտածոքեան մէջ ընկած). —

Կարկանդակը... կարկանդակը... (ցած ձայ-
նով) Հիմայ պիտի ըսեմ: Կարկանդակը կե-
րուեցաւ:

Իգնատ. — Բայց որկրամո՞ղը:

Ֆելիքէ. — Կը ցաւիմ: Մայրս չեմ գայն:

Իգնատ. — Կ'ուզեմ՝ գիտնալ, մանաւանդ: Ո՛վ
է...

Ֆելիքէ. — Արմանդոյ:

Արմանդ. (սաստիկ զայրացած). — Ստախօ՛ս:

Ֆելիքէ. — Ինծի՛ կ'ըսես:

Արմանդ. — Այո՛, որովհետեւ ես բնաւ ձեռք
չեմ դպցուցած անոր:

Ֆելիքէ. — Ատիկայ անոր ըսէ որ զայն ինծի
պատմեց և ոչ թէ ինծի:

Արմանդ. — Եւ ո՞վ է այդ անձը:

Ֆելիքէ. — Դժուար չէ զայն գուշակելը: Պա-
րոն...

Ամենք. (բաց ի Փիլիպպոսի). — Փիլիպպո՛ս...

Ֆելիքէ. (արտոնատակալ). — Փիլիպպո՛ս:

Փիլիպ. (շաղկամ). — Ա՛հ, ո՛չ, ո՛չ: Ատիկայ
զրպարտութիւն մ'է: (Քաշկիւնակը գրպանէն
դուրս հանելու տեսնէ կարկանդակի մէկ կտու-

րը գետնէ կ'իջնայ):

Իգնատ. (սաստիկ արեւմտ). — Ա՛հ, այո՛... Բայց
ստատան տանը առանց խուրի կը շինէ: (գետ-

նէն վերցնելով ընկած կտորը) Ահաւաստիկ հոս
կարկանդակէն կտոր մը որ քու գրպանէդ
ընկաւ:

Յար. — Ապրի՛ս, պարոն ստախօ՛ս, իմ ուրա-
խակցութիւններ:

Իգնատ. — Ո՛հ, լաւ միտքս եկաւ. ըսէ՛ ինձ
ուրեմն Ֆելիքէ: Դո՛ւ բացիր այն պաշու-

սակը.

Ֆելիքէ. — Միթէ՛ կարելի՞ է այդ բանը:

Իգնատ. — Կը բաւէ այսչափ:

Ֆելիքէ. — Ինչո՞ւ համար:

Արմանդ. — Որովհետեւ Փիլիպպոս այդ յան-
ցանքը քեզի կը վերադրէր:

Ֆելիքէ. — Շատ լաւ. ապա թէ որ ինքն ըլլայ
բացողը.

Փիլիպ. — Ե՛ս:

Ֆելիքէ. — Ճիշտ դու:

Փիլիպ. (հեծեծելով). — Ես այդ տեսակ բաներ
չեմ ըներ:

Ֆելիքէ. (հեծեծելով). — Ինչո՞ւ անմոռելի:

Փիլիպ. (զայրացած). — Բոլորովին անմոռ:
Իգնատ. (Փիլիպպոսի). — Լո՛ւք ստախօ՛ս:

Փիլիպ. — Ես սուտ չեմ խօսիր:

Յար. — Ուրեմն դու կը հաստատեն որ պաշու-

սակին զգած չես բնաւ:

Փիլիպ. — Կ'երդնում խօսքիս վրայ: Պիտի
ուզէի...

Յար. — Շատ աղէկ: Այն ատեն երբ տունէն
դուրս ելնեմ, քեզի համար ալ նուէր մը պիտի
գնեմ:

Փիլիպ. (աշխոյժով). — Հրացանիկ մը:

Յար. — Այո՛, հրացանիկ մը:

Փիլիպ. (շարժամանկաբանով). — Եւ ինչո՞ւ ու-

րեմն ունեցածդ չես տար ինծի:

Յար. (անգեւտ ձևանալով). — Ո՛ւր է:

Փիլիպ. — Հո՛ն:

Յար. — Ձեռմ հասկնար:

Փիլիպ. — Բայց այն, պայուսակին մէջ:

Յար. (յարդրակամ). — Ահ, ահ, իմ ուզածս ալ այս խոստովանութիւնն էր:

Փիլիպ. (մահաւցած). — Ո՛, վա՛յ ինձ, ի՛նչ բան ըսի:

Յար. — Ուրեմն, ահաւասիկ որ պայուսակը դու բացեր ես:

Իգնատ. (մէկ ականջէն բռնած). — Ուրեմն այսպէս է, է՛հ, որ դու այ սուտ չես ըսեր:

Ֆելիշէ. — Սուտերը սուսկի կը նմանին. կամ ատու կամ վերջը երեսն կ'ելնեն: (կը մեկնի):

Փիլիպ. — Ուրեմն, ստուգապէս ստախոս մ'եմ ես:

Իգնատ. — Եւ որ տեսակէն:

Փիլիպ. — Քանի որ այդպէս է, կը խոստանամ ամենուրեք ասկէ ետքը ուղղելու զիս:

Իգնատ. — Ահա ուրիշ մէկ սուտ մ'ալ:

Փիլիպ. (տակնդժիկ). — Ո՛չ ո՛չ. լըժօրէն կ'ըսեմ շայս:

Իգնատ. — Վեզի չնք հաւատար: կը հասկնամ ըսածս:

Փիլիպ. — Լաւ ուրեմն, կ'երգնում զայն:

Իգնատ. — Է՛հ, է՛հ, ուրիշ անգամներ ալ երգում ըրիր:

Փիլիպ. — Բայց այս անգամ խոստովանքս պիտի պահեմ: Ներքէ հայրիկ: (ամենուրեք) Ներքէք:

Յար. — Քանի որ այդպէս է, կ'ուզեմ փորձ ընել և քեզի կը ներեմ: Միտքդ պահէ, սա, կայն, որ «սուտը կարճ սրուններ ունի», և զարձեալ որ

Եթէ մէկը ստախոս ճանչցուած է,

Երբ ստոյգն ալ ըսէ, հաւատաւի չէ:

Փիլիպ. (անկեղծ). — Այո, Պապի ջան, այո:

Յար. — Հիմա ուրեմն... ահա քեզի փափաքած հրացանիկը, ասիկայ քեզի յիշեցնել

պիտի տայ քու վերջին սուտդ:

Փիլիպ. (արցունքի մէջ՝ ժպտելով). — Այո, Պապի ջան: Եւ եթէ ստախոս մը գտնեմ...

կը սպաննեմ զայն:

Ա. ՄԱՌԵՐԵՍԷԼԻՔ

Թրգ. Հ. ՅԱՅԵՐ ՏԵՐՈՅԵԱՆ

ՎԵՐՋ

ԱՅԼԵԻԱԹԼՔ

Ծ Ի Ր Ա Ն Ա Ի Ո Ր Մ Ե Ր Ս Ի Է

ԺԱԾԹԵՐՈՒ և ողորդեցնող տարին է. շատերուն յոյսերն ու ժպիտը արցունքներու մէջ խղճեցան. բայց ցաւերու դառնագոյնը՝ մարտիրոս ժողովուրդ մ'է որ կը կրէ: Հազարաւոր հերոսները որ տեսնոյ թիրա սուրին զոհերն եղան, անթիւ կոյսեր ու երիտասարդներ, ծերեր ու մանուկներ որ դիակնացան՝ կարծես այսօր կը ծածկուին, կը թաղուին ծիրանիին տակ հօր մը որուն սիրտը կը դադրէ բարախելէ իր որդւոց համար:

Ունի Պեճիկիան իր բերաւոր նահատակներուն փոխան զեռ շատ ակննդ արտեր որ հայրենիքը պաշտեն, սակայն Մերսիէն փոխանակող հայր մը չիկայ... Մեռաւ նա... մեռաւ Մերսիէ¹. որբացած է Պեճիկիան. դարեր չեն բաւեր անոր մեծ սուգը մեռցնել, ինչպէս դարեր պիտի չբաւեն

Մերսիէ մը ծնելու, արդարութեան և իրաւունքի մարմնացումը՝ աշխարհաւոր պատերազմի օրերուն: Ու այսպէս Պեճիկիոյ սուգը միջազգային կը դառնայ, հաւաշխարհական՝ որպիսի է արդարութիւնն և իրաւունքը:

Փառքի զաւակ մ'էր որ ոսկեղէն դռներ բացաւ իր ազգին դէպ ի գիտութիւն, դէպ ի յաղթանակ. ու այս պահուն երբ Մերսիէ այլևս հողացած է, փոշիացած՝ իրեն հետ մահուան երկունքը կը կրեն հայրենի աւերակներն անգամ: Բայց նա դիւցազ մ'էր կրօնքին, հայրենիքին. և իր մահը

1. Երբ. Desiré Meroier, արքեպս. Մալիէի, հաւաքակողորդութեան Պեճիկիոյ, մե. 1851, ի Braïne - l'Alleud (Ուարթերլուի գոյ). վեհ. 24 Յունուար 1926: